

մէն բանով զժբախտ էին, անտեսապէս, երկրապէս, եկեղեցապէս, կառավարապէս, ժողովրդապէս, ընկերապէս, դիտապէս, ամենապէս. մէկ բան միայն ունէին կատարեալ, իրենց լեզուն ու իրենց այբուբենը. ամ ալ ուղեցին ապականել, որպէս զի կատարեալ ըլլայ զժբախտութիւննին...

Սէրը պիտի գրուի եղբւր սեր. որով սիրելի եւ սերելի բայերը նոյն արմատը պիտի ունենան. ուստի հայ մը երբ ասկէ վերջ իր եղբորը նամակ գրէ՝ պիտի ըսէ. «սերելի եղբայր, եւ եչ թէ սիրելի...»

Վէր (վէրք) պիտի ըլլայ վեր. որով վերին, վերնական, եւ վերաւոր նոյն արմատը պիտի ունենան, եւ պիտի ըսենք վերաւոր, վերաւորել:

Գէր պիտի ըլլայ գեր. որով գիրանալ, գիրապարար եւ գերադանց, գեր ի վերոյ՝ միեւնոյն արմատը պիտի ունենան: Նոյնպէս պէտ եւ պետ, պիտանի, պետական, գէտ եւ գետ, գիտուն եւ գետահոս նոյն արմատները պիտի ունենան, եւ ասկէ վերջ պիտի ըսենք գետութիւն, գետնական, գետուն, սագետութիւն...

Կարելի՞ է երեւակայել աւելի մեծ բարբարոսութիւն: Այդպէս գրեւորվ հայ լազգին գլուխը կոտո՞ջ պիտի բուսնին...

Ես վստահ եմ որ ոչ մէկ հայ պիտի չգործէ այդ ոճերը, եւ պիտի չգրէ տեր, սեր, աղետ, նուեր:

Հարցում մը յարգելի Յանձնաժողովին. ինչո՞ւ համար նուէրը՝ նէր կը գրէ: Ո՞ր օրէնքով, ի՞նչ կանոնով այդ ո գերը կը փոքնէ կը նետէ:

Անշուշտ պիտի պատասխանէ. Ասոր մեղքը Ղազարոս Աղայեանին ճիտը. մենք, ինչպէս եւ ուրիշ շատեր ոչխարաբար հետեւեցանք իրեն: Ինքն էր որ առաջին անգամ այդ ո-ն քանցեց փրցուց նետեց, եւ սկսաւ գրել Աստած, գրածք, բանոր: Տարիներ կուտեցաւ, եւ թէ-եւ Մակար Կաթողիկոսի հրամանաւ իր գրքերը վտարուեցան դպրոցներէն, բայց շնորհիւ նոյն այդ դասագրքերուն, յաղթանակը տարաւ վերջապէս: Շատերն իրեն հետեւեցան ոչխարամտօրէն: Մալխասեան եւ Աբեղեան կուտեցան, եւ շարունակեցին գրել ու-ով, եւ

այդպէս ալ դասախօսել մին Ներսէսեան եւ միւսը Գէորգեան ճեմարանին մէջ:

Ցաւալին այն է սակայն որ նոյն այն Մալխասեանը երբ 1912-ին նորէն արժարձեցաւ ուղղադրութեան խնդիրը, լքեց իր պաշտպանած ուն, եւ աւելի անհեթեթ սխալ մը գործեց. սկսաւ ամէն տեղ վ գործածել. հալ, փալ, եվ, քեվ, Աստված. եւ գիրք մըն ալ գրեց «Մէկ հնչիւնին մէկ դիր» վերնագրով:

Սեղրակ Թառայեան ընդունեց Մալխասեանի վ-ը, եւ իբր թէ ասի բաւական չըլլար՝ բառասկիզբի յիերը փոխեց հ-ի. հարմար, հատուկ...

Կը տեսնե՞ս, սիրելի ընթերցող, ահա այս մարդիկն են, որ Երեւանում նստած մեր լեզուն՝ գիրը սրբագրելու են ելեր. արեւուն տակ ասկէ աւելի անհեթեթ բան կատարուած է երբեք... խեղճ Հայութիւն...

Յանձնաժողովը եթէ կ'ուզէ յիշատակելի գործ մը ընել, ատի պիտի ըլլայ ուի վերահաստատումը. քաւել ջնջել Ղազարոս Աղայեանի գործած ոճերը:

Ահա խնդիրը՝ պարզ, պայծառ, սկանալիք, մանրերկրորդի մէջ սորվելիք.

Չայնաւորէ վերջ՝ ւ, բաղաձայնէ վերջ՝ ու:

Թագաւոր, հաւ, թեւ, անձրեւ, թիւ, պատիւ, հաշիւ, անիւ, եւն.:

Նուէր, պատուէր, տուաւ, բանուոր, ջրուոր, եկուոր, գինուոր, ագնուութիւն, Աստուած, արարուած, ստուեր, թուաբան, հաշուակալ, պատուաւոր, եւն:

Այս մասին տես նաեւ 5:

2. Օ գիրը պահել բառերու սկիզբը եւ բարդութիւններու մէջ (օր, օգուտ, սնօրէն, անօգուտ): Միւս դէպքերու մէջ գրել ո (մտտ, աղատ, մկո):

Ասկէ աւելի հիանալի կանոն տեսած չեմ ոչ մէկ լեզուի մէջ. եւ ասի յիբաւի մեծ պատիւ է Յանձնաժողովի մեծայարգ անդամներուն. կանոն մը՝ որուն պիտի հաւնէին նոյն ինքն Ս. Սահակ, Ս. Մեսրոպ, Եգիսիկն ալ միսին:

Այդ սարսախ օ-երը իրաւ իրաւ արժանի էին այդպիսի պատիժի մը. ինչո՞ւ դացեր գրերուն մէջ են մտեր. եթէ կ'ուզեն որ օ մնան՝ թող դուրս ցատքն իրենց որջերէն. մտին օ-ն